ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/26, 16.05.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8 *ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ*, գրասենյակային կահույքի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել *ՀՀ պետական եկամուտների կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած *«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը*:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ,

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, Մարալիկ
Գազարինի փող., 29 շենք
Հեռ: +374 94 432 550
Էլ.փոստ՝ hasmikjan61@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Հասցե՝ ՀՀ , ք.Երևան, Մ. Խորենացի 3, 7
Հեռ: +374 60 544 703
Էլ.փոստ՝ spartakharutyunyan76mail.ru

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար
«Գրասենյակային կահույքի» ձեռքբերման նպատակով հայտարարված
«ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- *Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.*

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «Գրասենյակային կահույքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին և սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը

որոշում է կայացրել «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը ուղարկվել է սահմանված ժամկետից ուշ, այն է՝ 10.05.2019թ. :

- *Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով *մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:*

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, *ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:*

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև նույն արձանագրության համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին և սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Սակայն «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ուղարկվել հայտով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը ուղարկելու վերաբերյալ:

Ավելին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությունից անգամ անհայտ է մնում, թե հանձնաժողովը ինչի վերաբերյալ է ծանուցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4 ենթակետի համաձայն՝ հայտերի

բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, բան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի. ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին, *մինչդեռ գնահատող հանձնաժողովի կամ հանձնաժողովի քարտուղարի կողմից որևէ ծանուցում չի ստացվել:*

22 գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ *«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ն այդպես էլ չստանալով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջը /Ծանուցում/*, այլ փոխարենը ստանալով միայն 02.05.2019թ.-ի արձանագրությունը՝ 10.05.2019թ. սեփական նախաձեռնությամբ էլեկտրոնային տարբերակով ներկայացրել է փաստաթղթերը, որը փաստվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անհասկանալի և անհիմն գործողությունների հետևանքով խախտվել է «Գնումների մասին» 22 օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» 22 օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ բննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ունդունել որոշումներ

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Նկնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել ՀՀ պետական եկամուտների կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 13.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած «ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝
«ՕԼԱՆԴԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Վարոսյան

«16» 05.2019թ.